Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 10

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

Հոդված 62. Կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերումը

1. Կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ համապատասխան նորմերը:

Հոդված 62.1. Իրական շահառուները

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառավարչի և օտարերկրյա կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի և ներկայացուցչության իրական շահառուների բացահայտման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ներդրումային ընկերությունների վերաբերյալ համապատասխան դրույթները: